

Key words: incompleteness, “open form”, unity and integrity of form, art, artistic perception, recipient, a conscious choice of the author, artistic ideals, artistic values.

ՆԵՐՄԵՍ ՇՆՈՐՀԱՎՈՒ «ԹՈՒՂԹ ԸՆԴԱՆՐԱԿԱՆԻ» ԻՐԱՎԱՔՄԱԳԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՐՁ

ԼԻԼԻԹ ՄԱՐՎԱԶՅԱՆ Փիլիսոփայական զիտությունների թէկնածու

Աստվածաբան, փիլիսոփա, եկեղեցական-քաղաքական գործիչ Ներսէս Շնորհալին (Ներսէս Դ. Կըլայեցի (1101/1102-1173թթ.)), ով հանրահայտ է հասարակական-քաղաքական և դիվանագիտական գործունեությամբ, մեծարվել է մի շարք պատվանուններով՝ «Երկրարդ Հռոսավորի», «Տիեզերական ուսուցիչ», «Փիլիսոփա», «Հռետոր», «Երգեցօղ». Շնորհալու գործունեությանն ու ազգային նպատակներին համահունչ է նրա գրական ստեղծագործությունը: Հայ ազգի ազատության և անկախության համար մարտնչողներ դաստիարակելու և նրանց մեջ ազգային գաղափարներ սերմանելու նպատակով Ներսէսը գրում է «Ասք Հոմերոսի ոճով» (1121) պատմական պոեմը: Նա արծելորում է հայկական պէտականության ստեղծման ու ամրապնդման իրողությունները՝ իդեալական հերոս համարելով Տիգրան Մեծին: «Ողբ Եղեսիոյ» (1146) պոեմը, որում քարոզում է ազգային միասնության գաղափարը, «Յիսուս որդի» (1152) եպիկական ողբերգությունը, «Հայոց պատմությունը» (սկզբից մինչև 1121թ.), բարոյախրատական առակներ, քարոզներ, 200 հոգենոր երգ, շուրջ 300 հանելուկ. ահա Շնորհալու՝ ոչ ամբողջական գրական ժառանգությունը:

Առանձնակի նշանակություն ունի Շնորհալու քաղաքական-դիվանագիտական գործունեությունը հայ-հունական բանակցային գործնքացում և դավանաբանական պայքարում: XII դարակեսին Արևելքում իսլամի և մահմեդական իշխանության ծավալման շրջանում նա առաջադրում է հայ, սասրական, հունական ու լատինական եկեղեցիների, որպէս իրավահավասար և անկախ սուլյեկտների միավորման գաղափարը: Բացառելով որևէ Աթոռի գերիշխանությունը, Շնորհալին քրիստոնեական համերաշխությունը դիտում է իրավաքաղաքական խնդիրների խաղաղ լուծման, ազգի անվտանգության ու բարօ-

բուրյան հենք: Բոլոր խնդիրները նա փաստարկում է ազգային շահերի համատեքստում՝ կրոնաբարոյական սկզբունքները գուզակցելով ազգային-քաղաքական գաղափարների ու նպատակների հետ:

Ազգային իրավասությունների պաշտպանության առումով կարեվոր է Բյուզանդիայի կայսեր հետ Շնորհալու նամակագրությունը, որը բովանդակում է հայ և հունական եկեղեցիների միությանը վերաբերող գործընթացը և դրա հիմքում առկա բուն քաղաքական նպատակները: Միության վերաբերյալ հայերի ու հույների դիտավորությունները բացահայտվում են Սանտու Կոմինսոս կայսեր և Ներսես Շնորհալու Թղթերում¹: Դրանցում բացահայտվում է տվյալ պատմաշրջանի դավանաբանական վեճերի եռթյունը, որը փաստարկում է քրիստոնաբանական խնդիրների նորովի մեկնաբանությամբ:

Հասկանալով Հայ եկեղեցին ու ժողովրդին հունական եկեղեցուն հպատակեցնելու՝ հույների գաղտնի մտադրությունը, Շնորհալին կայսերը բացատրում է, որ ավելի քան 700 տարի գոյատևող խնդիրը հնարավոր չէ միանգամից լուծել՝ ընդունելով կամ մերժելով միության առաջարկը, «զի այսպիսի գործ՝ ոչ միայն և զբաժանեալսն ոչ միաւորէ, այլ և զմիաւորեալսն պառակտէ ՚ի միմեանց: Քանզի հակառակասէր է բնութիւն մարդկան, զորս ոչ այնքան բոնութիւն՝ որչափ խոնարհութիւն և սէրն ձգէ ՚ի հրամայողին կատարում»²: Բացի այդ, Շնորհալին առաջարկում է հրավիրել համագումար ժողով՝ հաստատելու բոլոր եկեղեցների միությունը, բայց ոչ տիրոջ ու ծառայի, այլ անկախ եկեղեցիների հարաբերակցությամբ: Նա միաբանությունը մեկնաբանում է որպես **Խաղաղության** հաստատում ազգերի ու եկեղեցիների միջն, «զի ճշմարիտ խաղաղութեանն ոչինչ է զուգահաւասար յէիցս բարեաց»: Հայ մտածողը հույներին հորդորում է ժողովով և «Աստուծոյ խորհրդակցութեամբ» քննել միության խնդիրը, և «ոչ մարդկային ախտի, անօգուտ բանակութեամբ և սնուտի յաղթասիրութեամբ՝ յորմէ ոչ ինչ օգտեցաւ եկեղեցի այսքան յերկար ժամանակաւ»³:

Ճարկ է նշել, որ Շնորհալին ոչ միայն չնահանջեց հայադավանու-

¹Տե՛ս Պատճառ խնդրոյ միաբանութեան // Ըսդհանրական Թուղթը Սրբոյն Ներսիսի Շնորհալոյ, Գիրը Երկրորդ, Յերուսաղէմ, 1871, Ի տպարանի Առաքելական Աթոռոյ Սրբոյ Յակովլեանց, էջ 85-201:

²Պատճառ խնդրոյ միաբանութեան, էջ 115:

³Նույն տեղում, էջ 163 և 165:

թյան սկզբունքներից, այլև ընդարձակեց ազգային ծիսակարգը հնագույն ձևաչափով՝ օտար որևէ նորամուծությամբ չաղավարելով այն։ Այս իրողությունը վկայում է Ներսես Մելիք-Թանգանը. «նա ժղովնեց բոլոր նախկին հայրերի ասածները, դասաւորեց, կարգի դրեց և տուաւ մեզ պատճառաբանուած, տրամաբանական հետեւողութեամբ կազմած դաւանութիւն»⁴: Բուկ այն նորույները, որոնք վերազրվել են Շնորհալուն, Ս. Օրմանյանի հավաստմամբ, ներմուծվել են Կիլիկյան թագավորության շրջանում՝ հայ-լատինական հարաբերությունների ընթացքում, երբ հայերն առավել լուրջ զիջումներով ձգուում էին պահպանել հայկական իշխանությունը⁵:

1166թ. ապրիլի 17-ին, ընտրվելով Ամենայն Հայոց կաթողիկոս, Շնորհալին իր հայրապետական գործունեությունը սկսեց ողջ հայ ազգին հղված գրավոր խոսքով: Դա Ներսեսի առաջին Կոնդակին է, որում բացահայտվում են նրա ազգային-փիլիսոփայական դավանանքը և իրավաբարական հայեցակարգը: «Թուովը ընդիանրականի» խրատականոններն արժենորդվում են բարոյական, կանոնական-իրավական ու սահմանադրական նշանակությամբ: Այն արտացոլում է դարաշրջանի քաղաքական կեցությունը և սոցիալ-տնտեսական հարաբերությունները: Ըստ Գ. Հարությունյանի՝ «Այս փաստաթությը եզակի է հայեցակարգային-ծրագրային ընդգրկումով, արժեհամակարգային ընդիանրացմամբ, նորմ-սպասականությամբ, նորմ-սկզբունքների ու «վարվեցողության» նորմերի փոխներդաշնակությամբ»⁶:

Կանոն-պատվիրանների հիմքում մարդու անձնիշխանության, կամքի ազատության, նրա բնական իրավունքների անօսապելիության գաղափարներն են: Հետեւելով Եզ. Կողբացու, Եղիշեի, Ա. Շիրակացու և այլոց ուսմունքներին Շնորհալին մերժում է ճակատագրապաշտությունը: Ըստ նրա՝ մարդն օժուված է կամքի ու գործունեության ազատությամբ, որով որոշակիորեն ազդում է հասարակական կյանքի վրա: Մտածողը հասուն ուշադրություն է դարձնում մարդու

⁴Մելիք-Թանգան Ն.Վ., Հայոց եկեղեցական իրաւությը, Ա Գիրը, Ներածութիւն եւ աղբիւթեր.- Շուշի, 1903, էջ 558:

⁵Տես՝ Սարվազյան Լ.Ժ., Սաղարիա Օրմանյան (Ազգային-փիլիսոփայական հայեցակարգը), Եր., «Եվլուպյին», հրատ., 2013, էջ 173:

⁶Տես՝ Թուովը Շնիհանրական Տ. Ներսիսի Կաթողիկոսի Հայոց՝ Շնիհանրական Թուովը Սրբությունը, Գիրը առաջին, էջ 1-83:

⁷Հարությունյան Գ.Գ., Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Եր., «Նժար» հրատ., 2005, էջ 90:

բարոյական կատարելագործման խնդրին: Կազմելով հոգևոր-բարոյական արժեքների վրա հիմնված խրատականոններ նա դրանք հղեց ժողովրդի բոլոր դասերին՝ համոզելով, որ ազգի հանդեպ բարձր պատասխանատվությամբ ու ակտիվ գործունեությամբ միայն կարելի է հաջողություն ակնկալել, հաղթահարել «չարութեան ու բազմիշխանութեան» տագնապները և առաջնորդվել «արդարութեան շավիդներով»:

Ընորհային լուսաբանում է սոցիալական այն հակասությունները, որոնք գոյություն ունեին XII դարում Կիլիլյան Հայաստանում: Քննադասում է շահագործողներին, ինչպես և հոգևորականության ու ազնվականության տգետ, բարոյագործի և սուախոս ներկայացուցիչներին, մերկացնում իր ժամանակի հասարակության մեջ արմատավորված արատները: Միաժամանակ խորհուրդներ է տալիս ինչպես «առողջացնել» հասարակությունը և ստեղծել հայոց պետականության վերածննդին անհրաժեշտ պայմաններ: Հանուն ազգի բարօրության նա բոլոր դասերին կոչում է համագործակցելու և բանական օրենքներով ու արդարության սկզբունքներով կարգավորելու դասերի փոխհարաբերությունները:

«**Ժուլը ընդհանրականը**» կազմված է Նախարանից և ինք ընդարձակ գլուխներից: «**Նախարանում**» Ընորհային դիմում է ողջ աշխարհի հայերին՝ խնդրելով. «Բանալ զականնաց մուաց ձերոյ յունկնդրութիւն աստուածային բանիցս այսոցիկ... որպէս զի առաջնորդեալ մեր ՚ի շատիս արդարութեան՝ արժանի եղիցի իրաքանչիւրսք ՚ի ձեսօ՝ միոյ օրեւանաց տան Հօրն երկնաւորի լինել ժառանգաւոր»⁸:

Անդամանալով **իշխանություն-ժողովուրդ** հարաբերակցությանը՝ Ընորհային հաստատում է, որ ազգային պետականության բացակայության պարագայում Հայ եկեղեցին միակ հաստատությունն է, որ կարող է համախմբել ժողովրդի տարբեր հատվածները, կազմակերպել հայոց կեցությունն ու ապահովել ազգի **իերենակա գոյությունը**: Նա բացատրում է **հոգևոր առաջնորդության խորհուրդը**՝ նշելով, որ այս առաջնորդությունը բաժանվում է տարբեր տիտղոսների, մեծ ու փոքր պաշտոնների՝ Կաթողիկոսության և Հայրապետության, Եպիսկոպոսության ու Քահանայության, և «որ մեծն է ՚ի սոսա, ծանրագունի բե-

⁸ Ժուլը Ըսրհանրական Տ. Ներսիսի Կաթողիկոսի Հայոց, էջ 2:

ուանց է՝ ՚ի ներքոյ, որպէս պարունակող զամենայնն»⁹: Այսինքն՝ Շնորհալին արդարության սկզբունքը հաստատում է հետևյալ բանաձևով. «որքան շատ իրավունքներ, ետքնան էլ պարտավորություններ»: Սակայն, ըստ կատարած գործի, նա հավասարեցնում է բոլորի անունները, քանզի նրանք վերակռչվում են «ծնող, դայեակ, վարդապետ, բժիշկ, դեռ լուսուց, հովիր, առաջնորդ, միջնորդ, դատավոր» և բազմաթիվ այլ անուններով, «որովք խորհուրդ աստուածապաշտութեանն կատարի, և օրէնք եկեղեցւոյ քրիստոսի ամբողջ մնա»¹⁰:

Շնորհալին կարևորում է ոչ միայն առաջնորդների իմաստնությունն ու Նվիրվածությունը, այլև ժողովրդի խոհեմությունն ու կամքը. «Զիա՞՞րդ կարելի է մեզ լինել առաջնորդ այնպիսեաց ոքք ոչ զկնի եւսոց առաջնորդին յօժարին ընդ արքունականն ընթանալ ճանապարհ որ տանի յերկինս, այլ ընդ լայն ու ընդարձակ պողոտայն՝ որ հասուցանէ յատակս դժոխքայ»¹¹: Առաջնորդը չի կարող միջնորդ լինել Աստծոն և այնպիսի մարդկանց միջն, ովքեր եղանակ ու գործերով հակված են շարին: Նա չի կարող նաև դատավարություն իրականացնել այնպիսի ազգի մեջ, որը չի ենթարկվում աստվածային օրենքների դատաստանին: Հասարակության մեջ արմատավորված շարիքները պայմանավորված են ազգի բաղաքական կեցությամբ՝ «բազմիշխանութեամբ», աշխարհիկ-պետական կենտրոնացված իշխանության բացակայությամբ. «Եւ քաղաք բազաւրական և բազմաժողովով ոչ գոյ ազգի մերում, որպէս զի անդանօր նստելով յԱթոռ հայրապետութեամ... ուսուցանեաք ժողովրդեան մերում զաստուածային պատուիրանն ըստ առաջին հայրապետաց»¹²:

Այնուհանդերձ, մարդն անենիշխան է ազգը՝ ինքնիշխան, ուստի մարդիկ իրենց կամքով են ընտրում բարին կամ շարը: Առաջնորդի պարտըն է հիշեցնել ձին և Նոր Կոտակարանների Աստվածային պատվիրանները, քանզի բոլոր բարիքների հիմքը հավատն է: Հաջողության կիասնեն նրանք, ովքեր եղանակ կընդունեն Աստծո պատվիրանները և արդար գործով՝ կապացուցեն դրանց ճշմարտացիությունը: Ընդ որում, Շնորհալին հիշեցնում է, որ աստվածային պատվիրանները տրվում են ընդունողներին, ըստ իրենց գորության, այսինքն՝ «տկարագու-

⁹Նոյն տեղում, էջ 3:

¹⁰Նոյն տեղում, էջ 4:

¹¹Նոյն տեղում, էջ 5:

¹²Նոյն տեղում, էջ 6-7:

նիցն՝ թերեւագոյնք՝ զի տանել կարիցեն, և զորաւորացն ծանունք՝ զի յոժարութեամբ բարձցեն»¹³: Այս հիմնարար սկզբունքների հիման վրա նա սահմանում է իշխանությունների ու ժողովրդի իրավունքներին ու պարտականություններին վերաբերող բազում նորմեր:

«Թուղթ ընդհանրականի» առաջին զիստում, դիմելով հոգևոր բարձր դասին՝ «գերաշխարհի կներին», Շնորհալին նրանց կոչում է «սիւնք աշխարհի», պարիսաց ընդդեմ թշնամույն և աստեղը լուսաւորը յերկրի»¹⁴: Նրանք օրինական ու արդարացի գործունեությամբ պետք է դառնան տիպորինակ: Ուստի, մտածողը հոգևոր առաջնորդներին հորդորում է չինել նյութապաշտ, ստախոս, ազահ, չհակվել աշխարհիկ Վայելքներին (որկրամոլության, զինեմոլության, արգելված հարաբերությունների և այլն), զերծ մնալ մեղքերից, իմաստնությամբ ու պարկեշտությամբ վարվել մարդկանց հետ, «զի օրինակաւ բարեացն՝ բազումք լինին բարիք, որպես և ՚ի նախանձու չշարացն վարուք՝ շարք յոլովագոյնք»¹⁵: Այս հրամանը Շնորհալին տալիս է որպես կանոնական օրենք, իսկ օրինազանցներին համարում կորուսալ՝ Աստծո և խոճի առջև ու պարտական՝ իրենց «արեամբ»:

Հոգևոր դասի համար պարտադիր է բարեգործությունը, ողորմությունը՝ աղքատներին ու տնանկներին: Թեև աստվածային օրենքով հոգևորականները չպետք է ունենան սեփականություն, բայց ոչ բոլորն են ապրում զուտ հոգևոր կյանքով: Նետեաբար, «երկկենցաղ», այսինքն հոգևոր ու նյութական կյանքով ապրողները պարտավոր են իրենց ունեցվածքից ինքնակամ մասնաբաժին տալ կարույալներին ու եկվանդներին: «Որ կամիցի մեծ լինել, եղիցի՝ ամենուն ծառայ»: Եկեղեցականները պետք է հնազանդ լինեն իրենց առաջնորդներին: Այս պատվիրանը, ըստ Շնորհալու, չի խախտում ազատակամության սկզբունքը, քանզի այս պարագայում ազատությունը դրսնարկվում է օրինապահությամբ: Աստծո կամքով «մարմնավոր» ծառաները պետք է հնազանդ լինեն «մարմնավոր» տերերին և ծառայեն ինչպես Աստծուն», իսկ հոգևորականները «առաւել քան զնոցայն ցուցանել հնազանդութիւն և համբերութիւն և միամտութիւն եկեղեցւոյ հոգեւոր առաջնորդաց»¹⁶:

¹³ Սույն տեղում, էջ 21:

¹⁴ Սույն տեղում, էջ 17:

¹⁵ Սույն տեղում, էջ 20:

¹⁶ Սույն տեղում, էջ 29-30:

Հոգևորականների բարոյական կեցվածքը առաջնային համարելով՝ Շնորհալին նրանց նկատմամբ առավել խստապահանց է **մեղադրծության** դեպքում: Ըստ նրա՝ գողերին, կծիններին, հափշտակողներին և նման հանցաների մեջ աշխարհականների պես գտնվողներին «առաւելապես դատի Աստուած, որպէս զգիտող կամաց տեսան ծառայ, քան զայն՝ որ ոչն զիտէ»¹⁷: Նա ամենավնասակար ու «անիծաբեր» ախտը համարում է **գողադրությունը**, որը սպանությունից ու «շնությունից» հետո երրորդն է Աստվածային իրավակարգում: Ընդ որում, մեղսագործությունն է համարվում ոչ միայն խոշոր չափի, այլև նվազագույն հափշտակությունը, ինչպէս նաև գողացվածը սեփական աշխատանքի վարձ համարելը:

Այս համատեքստում Շնորհալին նշում է, որ **սուզանքների** մեջ էլ կա տարբերություն, որովհետև օրենքը հրամայում է գողացածի քառապատիկը հատուցել, և տասը, հարյուր կամ հազար դահեկանի քառապատիկն ավելի մեծ է, քան մեկ կամ երկու դահեկանինը, սակայն «անունն մի և այն է մեծին և փոքրուն, բազմին և սակաւուն»: Համանամանորեն՝ թե՝ թիշ, թե՝ շատ գողացողը գող է կոչվում, և «ի վերայ ամենայն գողոց է գողութեանն անուն և պատիժ, որ գրագումսն գողանայ և որ զակաւան»¹⁸: Մոտածողը չի ընդունում **գողադրությունն արդարացնադրել պատճառարանություն**, ուստի՝ **ցանկացած կրոնավոր հանցավոր է ոչ միայն մեղսագործության սուբյեկտ լինելով, այլև սուսառաւությամբ ու երդումներով մեղքն ուրանապավ:** Այսպիսինների համար չկա մեղքերի թողություն, մինչև որ չզդան և չխոստովանեն նրան, ուսից գողացել են: Ուշագրավ է Շնորհալու հաստատած կանոնը, ըստ որի՝ գողացված իրի համար գողին թողություն տալու իրավունքը նրանն է, ով գողացված իրի տերն է: «ի թողութեան իշխանութիւն գոյոյն՝ յաղագս գողացելոյ իրին, որ տերն է գողացեալ գոյին՝ ունի, և ոչ օտար որ խոստվանահայր»¹⁹: Փասոռքեն՝ գողացված առարկայի տերը ոչ միայն տուժած կողմն է, այլև օրինական «դատող»-խոստվանահայրը: Հանցավորը չխոստովանելու դեպքում և՝ խստորեն պատժվում է, և՝ հավիտյան չի արժանանում մեղքերի թողության:

Շնորհալին դատապարտում է **անձի արժանապատվության** պատվի դեմ ուղղված հանցագործությունները՝ մարդու անձնական

¹⁷Նույն տեղում, էջ 30:

¹⁸Նույնը:

¹⁹Նույն տեղում, էջ 31:

կյանքը քննարկելը, չարախոսությունը, բամբասանքը, անկախ նրանից՝ ասվածը ճիշտ է, թե ոչ: Նա հատուկ խրատականնոնվ պատվիրում է. «Մի՛ որ սովորեցուացէ ՚ի կրոնաւորաց զլեզու իւր կամ չարախոսել ՚ի զուր զումերէ... կամ հակառակել ընդդեմ բանից հակառակողաց յանօգուտ կրիս և ՚ի վեասակար վիճաբանութիւնս, կամ ՚ի վիճելն թշնամանաց և անարգանաց բանս բարբառել որպէս զաշխարհականս՝ որ ոչ վայելէ սրբոց»²⁰:

«Թուղթ թնդիանքականի» երկրորդ զիտում Շնորհային առաջնորդներին պարտադրում է ուշադիր լինել միաբանության անդամ-եղբայրների հանդեպ: Եթե որևէ մեկը «մարմնական» վտանգի կամ հոգեվոր մոլորության մեջ է ընկնում, պետք է օգնեն, քանզի պատասխանատու են նրանց համար: Բայց առանց կողմնակալության հավասար հոգածություն ցուցաբերեն բոլորի նկատմամբ՝ առաջնորդվելով Բարսեղ Կեսարացու կանոնադրությամբ, որի համաձայն սերը պետք է լինի ամենքի հանդեպ, իսկ պատիվը՝ արժանավորների: Պաշտպանելով աշխատանքի և վարձատրության համաշափության սկզբունքը Շնորհային սահմանում է. միաբանության մեջ բաշխումը կատարել «բառ չափոյ աշխատութեանն՝ առաելութեամբ և նուազութեամբ»²¹: Հատկապես հարկ է սատարել ծերերին ու տկարներին՝ որպէս անօնական տարրերի: Եկեղեցուն նվիրաբերված ընծաները չի կարելի յուրացնել, դրանք պետք է գործածել Եկեղեցու կարիքների և բարեգործության համար:

Եկեղեցու առաջնորդությունը սուրբ պարտականություն համարելով, մտածողը բացառում է պաշտոնի ստանձնումը՝ ավագներին կաշառելով: Այս դեպքում մեղավոր են և՝ ավագները, և՝ առաջնորդը: Նա նշում է առաջնորդին փոխելու երկու օրինական պատճառ. ա) եթե առաջնորդը խախտել է Աստծո օրենքները՝ անիրավ գործեր կատարելով, որոնք պետք է հաստատեն «Ճշմարիտ վկաները», բ) եթե դարձել է Եկեղեցու ավերման պատճառ, քանզի հնուց ի վեր հոգևոր դասի առաքելությունը բարեկարգությունն է: Եվ «առանց այսոցիկ եթե յանդզնի որ հակառակ յառնել, մեղանչ յօրէնս Աստուծոյ»²²: Այդպիսով՝ հոգևորականների բոլոր խորհուրդներն ու գործերը պետք է պարկեշտ ու Աստվածավայել լինեն, որպէսզի դրանցով փառավոր-

²⁰Նույն տեղում, էջ 32-33:

²¹Նույն տեղում, էջ 36:

²²Նույն տեղում, էջ 38:

վեն ու բարու օրինակ լինեն:

Երրորդ և չորրորդ գրուխներն ասկովում են կանոններ՝ ուղղված եպիսկոպոսներին ու քահանաներին: Ըստ Շնորհալու՝ եպիսկոպոսները Աստծո կողմից տեսուչ են կարգված հավատացյալների հոգիներին: Նրանք պարտավոր են.

• Իմաստությամբ ճանաչել իրենց աստիճանի բարձրությունն ու կոչումը:

• Աստվածածան գործեր կատարել, իսկ երբ չեն կատարում արժանին՝ ճանաչելով իրենց մեջ բարու պակասն ու վնասը, «խճի մտաց իրոց դատէ զանձն՝ յանցաւոր զինքն համարելով»²³:

• Լինել պարկեցու, բարեւեր, ժուժկալ, անկաշառ, խաղաղասեր, խոնարի, քանզի վայել չե եպիսկոպոսին հպարտ և գոռող լինել հնագանդ ժողովրդի հանդեպ, «որպէս զգործակալս բոնաւորաց, այլ եեզութեամբ և խոնարհութեամբ վարուիլ առ ամեննեսեան»: Հարկ է հասկանալ խոնարհության խորհուրդը և հպարտության վնասը, որովհետո «Ամենայն որ որ բարձրացուցանէ զանձն՝ յոնարհեսցի, և որ խոնարհեցուցան՝ բարձրասցի»²⁴:

• Արդարությունն իրու գլխավոր սկզբունք ընդունել, որովհետո ովքեր արդար են, իրենց մեջ բովանդակում են բարու բոլոր տեսակները: Եպիսկոպոսը պարտավոր է լինել «արդար և ճշմարիտ առաջի Աստուծոյ և մարդկան, և արտաքոյ ստութեան և անիրաւութեան ՚ի բանս և ՚ի գործս»²⁵:

• Լինել ոչ նյութապաշտ, քանզի «արծաթասիրութիւնը», որ բոլոր շարիքների արմատուն է (տես՝ Ա Տիմոք., Զ, 10), վնասակար է ամեն գործում և ամեն մարդու՝ թագավորներին, դատավորներին, իշխաններին, գործակալներին, բայց առավելապես՝ հոգևոր առաջնորդներին: Եթէ նյութապաշտությունը աշխարհիկ իշխանավորներին մարտիքն է: Եթէ նյութապաշտությունը աշխարհիկ իշխանավորներին մարտիքն է: Անիրաւության, գրապարտության, գորության, սպանության կամ հանցավոր կուրժյան, զրապարտության, գորության, սպանության կամ հանցավոր կուրժյան, ապա «առ հոգեւորս՝ այս զեզգիս վնասէ»:

• Թեպէտ քրիստոնությունը քարոզում է հանդուրժողություն, բայց եպիսկոպոսը պետք է հանցավորների նկատմամբ խստություն

²³Նոյն տեղում, էջ 39:

²⁴Նոյն տեղում, էջ 41:

²⁵Նոյն տեղում, էջ 43:

գործադրի, ինչպես ներողամիտ լինի ու խրատի նրանց՝ խուսափելու նոր շարագործությունից:

• Ժողովրդին սովորեցնել եկեղեցու ուսմունքը և Աստվածային օրենքները:

• Հավատացյալներից բոնությամբ դրամ չկորզել և չնվիրել «մեր աշխարհի բոնակալներին», այս դեպքում Եկեղեցին մաքսատան կնմանվի: Այդախիներին՝ իբրև Աստծո դեմ մեղանշողների, չկա մեղքերի թողություն:

Քահանաները ևս պետք է հավատարիմ մնան իրենց առարելությանը, այն է՝ հովվել ժողովրդին, բարեգործություն անել, ժողովրդին խրատել, յուրաքանչյուրին ըստ տարիքի հորդորելով՝ միշտ սովորեցնել Աստվածայինը: Կարևոր հնագրյան ավանդույթների պահպանումն է, և դրանց հակառակելու պատճառը ոչ այլ ինչ է, «քան տղիտութիւն և ինքնօրէն անձնահաճ կամապաշտութիւն»²⁶:

Քազում նորմ-կանոններ քահանաներին արգելում են խախտել եկեղեցական ծիսակարգը: Օրինակ արգելվում է մկրտությունը կատարել իբրև աշխարհիկ գործ՝ առանց հոգևոր խորհուրդի, կամ դրամ վերցնել խորհրդակատարության համար: Դատական գործառույթ կատարելիս քահանան կամ աշխարհականը չպետք է «զեկեղեցոյ դատաստան առ մարմնական իշխանս դատեսցի, կամ առ այլազգին կամ առ քրիստոնեայս, զի մի՛ դատապարտեսցի յառաքելական և ՚ի կանոնական հրամանացն»²⁷: Քահանաներին արգելվում է նաև լինել զավառապետ, սահմանել հարկեր, տուրքեր, զբաղվել աշխարհիկ գործունեությամբ (ձիավարժություն, զինակրություն, որսորդություն, նետաձգություն, ինչը վայել է զինվորներին): Բայց եթե ճանապարհորդության ընթացքում պետք լինի զենք կրել՝ կարծեցյալ պատահարների վախից, պարկեցնությամբ լինի այն: Փաստորեն՝ **անձի կամ ազգի ինքնապաշտանության համար զինակրությունը չի արգելվում նաև հոգեորականին:**

Ընորհալին հատուկ անդրադառնում է **առնուսնական կարգին**, շեշտելով, որ ամուսնությունը կամավոր համաձայնությամբ, սիրով վրա հիմնված միություն է: Կարևոր են ծնողների համաձայնությունը և վկաների ներկայությունը: Ինչպես Մխիթար Գոշը, նա ևս պնդում է,

²⁶Նոյն տեղում, էջ 53:

²⁷Նոյն տեղում, էջ 65-66:

որ «այրն աւագագոյն պարտի լինել ըստ ժամանակի՝ քան զիջնն», ինչպես Աստված նախ Աղամին ստեղծեց, ապա՝ Եվային: Ամուսնացողները պետք է հասուն տարիք ունենան, տղաները՝ 15 տարեկան, իսկ աղջիկները՝ 12 կամ ավելի, «որպէս զի կարող լինիցին բանաւրաց հաճութեամբ զուզիլ ընդ միմեանս առ ի հաստատուն լինելոյ զուզութեանն»²⁸: Հակառակ նրանց կամքի ամուսնությունն «անհատաւ»՝ անօրինական է և լուծարելի:

Ըստրհալին սահմանում է **ամուսնությունն արգելող նորմեր հետևյալ դեպքերում**.

Ա. Եթե քահանան գաղտնի պսակադրություն է կատարում՝ առանց ծնողների իմացության ու կամքի: Իսկ եթե զուզը ծնողների հետ չի ապրում, բոլորի ներկայությամբ պետք է կատարվի պսակադրությունը, որպէսզի բոլորը վկայեն, որ այն Աստծո օրենքներին հակառակ չէ:

Բ. Եթե չկան վատահելի վկաներ, որովհետև առանց վկայի՝ ամուսնությունն անօրինական ու անվավեր է:

Գ. Եթե ամուսնությունը կայանում է մերձավոր բարեկամների միջև, քանզի օրենքը հրամայում է. «Մի՛ որ համազգեաց՝ որոց արեան մերձաւորութիւն իցէ, պսակ օրինութեան դիցէ, այլ մինչեւ ի երկուց կողմանց զարրարդ ազգին զիհասորութիւնն կատարեալ ունիցին»: Հիմնվելով Հայ կանոնական իրավունքի սկզբունքների վրա՝ Ըստրհալին մեկնաբանում է **չըստ թիվը որպէս ամուսնության սահման**: Ըստ նրա՝ քանի որ մարմնի բնությունը կազմված է չորս տարրերից, ապա մարմնական ազգակցությունն էլ մինչև չորս թիվն է հասնում հետևյալ կերպ. մեկ հորից երկու եղբայրները հավասարապես կրում են հոր բնությունը, նրանց սերունդները՝ եղբայրների արյան կեսն ունեն, թոռները, այսինքն՝ երրորդ սերունդը, արյան 1/3-ը ունեն, իսկ ծոռները՝ չորրորդ սերունդը, մնացած արյան չորրորդ մասը. «Եվ այս է սահման և կետ արեան մերձաւորութեան»²⁹: Դրանից հետո թույլատրվում է պսակը:

Դ. Եթե տեղի է ունեցել կնոշ առևանգում. այս պարագայում պակը դառնում է չարիք, քանի որ հաճախ կեղծ ամուսնությունից հետո ատելությամբ բաժանվում են:

²⁸ Ըստ տեղում, էջ 62-63:

²⁹ Ըստ տեղում, էջ 63:

Ե. Եթե առանց կանոնական հրամանի քահանան պսակի կնաքող այրերին և այրաքող կանանց, այս դեպքում նա կարգալույժ կարվի, իսկ «պսակն քակտեսցի»:

Զ. Եթե ցանկանում են ամուսնանալ «անմեղ» տղաների հետ՝ հանուն ժառանգության կամ այլ պատճառով, քանզի «բազում վնասք լինի և յայնցանէ և պատճառու բաժանման յետոյ ի միմեանց»³⁰:

Է. Եթե պսակադրությունը կատարվում է «բոնակալների» ստիպումով, ինչը Հայաստանի այն զավատներում է կատարվում, որոնք «ընդ իշխանութեամբ այլազգեաց են»: Այսպիսի պսակը բխում է ոչ թե Աստծո հրամանից, ազգի ավանդույթից, այլ մարդկային բռնությունից, ուստի այն անօրինական է՝ լուծարելի, և «պսակադիրն ոչ առանց պատժոյ»: Նրանք արժանի են դատապարտության, քանզի «Աստուծոյ և գրատաստանս եկեղեցւոյ լուծանել փութան բռնութեամբ աւագաց»³¹:

Այդպիսով՝ Շնորհալին պահպանում է հայ ընտանեկան իրավունքի ավանդական սկզբունքները, որոնք, ինչպես բազում այլ նորմեր, առկա են Գոդի և Սմբատի Դատաստանազրերում:

«Թուղթ ընդհանրականնի» հինգերորդ գլուխն ամփոփում է աշխարհիկ իշխանների համար սահմանված կանոնները: Գավառների և զորքերի տեր իշխաններին Շնորհալին պատվիրում է՝ հնազանդվել Աստծո օրենքներին այնպես, ինչպես ծառաները՝ իրենց տերերի հրամաններին: Իշխանները պարտավոր են.

• Հպատակներին արդարաբար կառավարել՝ զերծ մնալով բռնություններից:

• Ծանր հարկեր չսահմանել, այլ առանց աշառության՝ «օրինօք դատեցեք և բատ չափոյ զօրութեան զիւրաքանչիր ոք, զմտաւ ածէք»³²:

• Աղքատներին ու տնանկներին չշահագործել, ինչը չարիքով է հասուցվում:

• Հայրենական տիրույթներում անօրեն զավառապետեր ու վերակացուներ չնշանակել, այլ «զարդարամիտս և զարդարապատս ընտրեցեք ունել ՚ի վերայ մարդկան զգործակալութիւն», որ չխախտեն արքունիքի սահմանած իրավունքները և չկաշառվեն: Նրանք պետք է

³⁰ Նոյն տեղում, էջ 62:

³¹ Նոյն տեղում, էջ 63:

³² Նոյն տեղում, էջ 69:

«իրաւադաս լինիցին, զի տացեն զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ»³³:

• Հպատակներին չպետք է ծառայեցնել «որպէս անբան կենդանիս՝ որ բնութեամբ ծառայք են մարդկան», այլ անհրաժեշտ է պակասեցնել աշխատաժամերը, առանց կրծատելու վճարել աշխատավարձը, բացառել խիստ ծանր աշխատանքը, կերակրել ինչպես հարկն է, որ կարողանան իրենց վաստակով իրենց աղքատ տների և զավակների կյանքն ապահովել և «զարքունական հարկսն հասուցանել»³⁴:

• Իշխանավորները պետք է զերծ մնան անօրինական արարքներից (գողություն, հափշտակություն, սպանություն, խարդախություն, բռնություն և այլն): Ու եթե նրանք չեն վախենում մարմնական պատժից, պետք է հիշեն, որ ամեն ինչ խմացող մեկ այլ Դատավոր կա, ումից չեն կարող բարենել իրենց զաղտնի չարագործությունները: Ըստ որում՝ իշխանների օրինազանցություններն առիթ են տալիս, որ չարիքին հակվողները չարության օրինակ վերցնեն նրանցից:

• Առանձնակի ուշադիր լինել երկրի պահապան-զինվորների նկատմամբ: Զնվագեցնել նրանց բռշակը, քանզի մեծ անիրավություն է դա նրանց «բափած արյան համար»: Բացառել բռնությունները զինվորների հանդեպ, որպեսզի պատիժ կրելու վախից չփախչեն, այլ «հաւատարմութեամբ ծառայեսցեն ձեզ և առանց նենգութեան»³⁵: Շեորհային պաշտպանում է նաև տիրոջից զինվորների հետանալու իրավունքը՝ իշխաններին հորդորելով նրանց համոզել ծառայել կամովի և ոչ պարտադրանքով:

Ուշագրավ են միայն օրենքով ու արդար դատուելու, օրենքի ետադարձ ուժի, պատասխանատվության ասամբանի ու պատժի համաշխափության վերաբերյալ Շնորհալու խրատականները՝ ուղղված իշխաններին.

• «Մի՛ զոք անիրաւութեամբ դատիք, այլ ուղիղ դատաստան արարեք՝ համաձայն Աստվածային օրենքների: Դատավորը պետք է լինի արդար, անկաշառ, անաշառ, հավասար վերաբերի երկու կողմին՝ տուժողին և մեղադրյալին: Աստելությունն ու ոխակալությունը կամ որևէ մեկից ակնկալվելիք պատիվը չպետք է պատճառ լինեն, որ

³³Նույն տեղում, էջ 69-70:

³⁴Նույն տեղում, էջ 70:

³⁵Նույն տեղում, էջ 75:

«զանիրաւն արդարացուցաներ ՚ի դատաստանի, և զարդարոյն թիւրեք զիրաւուն»³⁶:

• Զպեսր է անտեսել այրիների, աղքատների և որբերի իրավունքները: Եթե նրանք բողոքեն իրենց շահագործողներից, հարկ է փրկել նրանց կեղեցիչներից և անիրավների հափշտակած գույքը վերադարձնել:

• Պատիմները պեսր է սահմանվեն կատարած հանցագործություններին հստապատասխան, և ոչ կամայականորեն. «Մի՛ առ բարկուրին շարժերվ և ոչ ուղղաղատ իրավամբը, կամ իրատ ինչ առներ մարդոյ կամ մահու վճիռ տայցեք»: Նոր՝ քրիստոնեական օրենքը դա չի բույլատրում, ու թեև Հին օրենքը բույլատրում է պատժեն ու մահապատիժը, «բայց ոչ վայրաբար, այլ՝ ըստ յանցանացն արժանառութեան՝ զիւրաքանչիւրսն դատել ՚ի իրատ և ՚ի մահ (ընդգծումը. Լ.Ս.)»³⁷: Իշխանները պեսր է զերծ մնան քինախնդրությունից ու վրիժառությունից, նրանք ազատ են որոշում կայացնելու. Հին կամ Նոր օրենքով, իսկ անօրինական դատավճռի դեպքում կարժանանան Աստծոն դատաստանին, քանզի Աստվածաշունչը պատվիրում է. «Մի՛ դատեք, որ ՚դատուիք. Որովհետեւ ինչ դատաստանով որ դատում եք, նորանույ պիտի դատուիք. եւ ինչ չափով որ չափում եք, նորանույ կ'չափուի ձեզ» (Մատք., Գլ. Է, 1-2):

«Թուղթ Ընդհանրականի» վեցերորդ գիսի կանոն-իրատներն ուղղված են զինվորների դասին: Զինվորականությունը XII դարում հարգված ու արտոնյալ դաս էր և հասարակական-քաղաքական կյանքում ուներ կարևոր դեր: Զինվորները ենթակա են պետական կամ ազգային իշխանությանը, ուստի՝ պեսր է հնագանդվեն նրան: Ծնորհալին զինվորներին հորդորում է ազնվորեն ու արիաբար ծառայել՝ պատվիրելով. «Մի՛ առ անկանէ ծառայել որպէս մարդահաճոյք, այլ միամոռութեամբ սրտի՝ որպէս Աստուծոյ»: Հավատարիմ ծառայելիս զինվորները հատուցվում են, իսկ տիրոջ անձի, նրա ամրոցի կամ ունեցվածքի նկատմամբ ուննազության դեպքում, ինչն անարգանք է Աստծոն դեմ, «յԱստուծոյ ընդունելոց է զվրեժ հատուցման շարեաց իրոց»³⁸: Քրիստոնյա իշխաններին զինվորները պարտավոր են անվերապահ հավատարմությամբ ու սիրով նվիրվել: Իսկ եթե «՚ի քրիստո-

³⁶Նույն տեղում, էջ 70:

³⁷Նույն տեղում, էջ 76:

³⁸Նույն տեղում, էջ 77:

նեից ոք ընդ այլազգույ է իշխանութեամբ, և 'ի նորին պարզեւաց կերակրի և զգենու, նոյն հաւատարմութիւն պարս է ցուցանել նմա, և զառանց նենզութեան ծառայութիւն»³⁹: Զինվորները նաև պետք է արդարությամբ ու իրավացի վարչեն հնազանդ հապատակների եւտ, բռնությունների ու կտուանքների չենթարկեն նրանց՝ «օրինօք դահճաց»:

Ըստ Շնորհալու, զինվորությունը պատճառ չէ՝ արհամարհելու Աստծո պատվիրանները, անհնազանդ լինելու հոգեւոր առաջնորդներին, ովքեր հորդորում են. պահպանել սուրբ կանոններն ու ավանդույթները, չկողոպտել աղքատներին, «անմեղ արյուն» չհեղել: Քանզի, եթե պատերազմի ժամանակ սպանությունները թագավորի հրամանով են լինում, ու դրանց պատասխանատուն նա է, ապա խաղաղ բնակչության դեմ գործած բոլոր մեղքերի համար պատասխանատուն են զինվորները: Այս դեպքում «ամենեցուն համարս պահանջելոյ է 'ի ձենք Աստուած՝ ծանր և անաշար դատաստանաւ»⁴⁰: Մտածողը պատվիրում է զինվորներին. «առաւել քան մարմնական զինուք՝ հաւատոյ զինուն վատեցարուր», այսինքն՝ սպառազինվել աղոթքով, Աստվածապաշտությամբ, արդարությամբ և հանդուժողությամբ, «որպէս զի Աստուած լիցի ախոյեան 'ի պատերազմունսն, և զբշնամիսն վանեսցէ առաջի ձեր»⁴¹:

«Ժողով ընդհանրականի» վերջին երեք (7-9) գլխում սահմանվում են իրատ-կանոններ՝ ուղղված ժողովովին: Արևորականներին ու արհեստավորներին Շնորհալին հորդորում է զերծ մնալ խաբեությունից, պահպանել առևտրի կանոնները, սուս երդումով չվաճառել արգելված կամ վասորակ ապրանքներ՝ մանավանդ զյուղացիներին, որ պարզամիտ են, «զի 'ի դատաստանին աւուր ընդ գրդս և ընդ յափշտակողս դատելոց է այնպիսին»: Վաճառքը պետք է կատարվի օրինականության ու արդարության սկզբունքներով՝ պահպանելով ճիշտ կշռաշափը: Ինչպէս Սիսիթար Գոշը, Շնորհալին նույնպէս դատապարտում է վաշիառությունը, տոկոսով փոխառությունը՝ պատվիրելով շուրացնել աղքատների վաստակը, կարեկից լինել նրանց հանդեպ, և «զոր տայը նոցա փոխ, զայն միայն պահանջիցէ՝ ք 'ի նոցանե»⁴²:

³⁹Նոյն տեղում, էջ 77-78:

⁴⁰Նոյն տեղում, էջ 78:

⁴¹Նոյն տեղում, էջ 79:

⁴²Նոյն տեղում, էջ 80:

Հստ մտածողի՝ ողջ ժողովուրդը կարիք ունի հոգևոր արժեքներով ապաքինել հոգին՝ ազատվելու «մեղքերի հիվանդությունից»: Իսկ դրա համար հարկ է նախ հրաժարվել վատ սովորություններից՝ զինեմոլությունից, օրենքով արգելված հարաբերություններից, զեխությունից, հայոցախոսությունից, վիճաբանությունից, խոռվություններից, սպանությունից և այլ չարագործություններից: Իսկ եթե որևէ մեկն ինչ-որ հանցանքով մեղանչի Աստծո դեմ, մինչև Դատաստանի օրը պետք է ազատվի այդ արատներից, այսինքն՝ «ի ձեռն խոստովանութեան և ապաշխարութեան քաւեսցէ զանցանս իւր, և գործեսցէ յայսմ հետէ փոխանակ չարին զբարիս»⁴³: Քանի որ **սերը զիշավորն է բոլոր բարիքներից**, ժողովուրդը պետք է հոգատար լինի աղքատների, բանտարկյալների և հիվանդների հանդեպ: Այդպիսով՝ Շնորհալին հոգևոր պատիժներն ու բարեգործությունն է համարում ազգի հոգևոր ապաքինման հիմնապայմաններ:

«Թուղթ ընդհանրականում» սահմանված են **հասուլ կանոններ կանանց համար**: Կարևորելով նրանց դերն ընտանիքում ու հասարակական կյանքում՝ Շնորհալին կանանց հորժորում է լինել պարկեշտ, բարեկիրթ, համեստ, ինչպես վայել է քրիստոնյա կնոջը: Կինը չպետք է լինի պմանասեր, որ զգայթակոի «անմիտ» երիտասարդներին, ինչպես և նյութապաշտ, այլ հարկ է «առաւել քան ոսկով և արծաթով» ամորխածութեամբ և պատկառանօք զարդարել զանձինս ձեր»⁴⁴: Կանայք պետք է խուսափեն սնուտիապաշտությունից, զգաղվեն կախարդությամբ, հմայությամբ, դեղատվությամբ և այլն: Դրանք աններելի չարիքներ են, որոնց հակված են կոապաշտները, հետևաբար՝ պատժելի են:

Շնորհալու կանոն-խրատները վկայում են իր ժամանակաշրջանում առկա տարաբնույթ հանցագործությունները, խախտված բարոյական օրենքները: Սոցիալական որևէ դաս զերծ չի եղել անօրինությունից ու մեղսագործությունից, ինչն էլ իրավագետ-կարողիկոսին ստիպել է սահմանել խրատականուներ՝ ժողովրդի բոլոր խավերի համար: Մերկացնելով յուրաքանչյուր դասի թերությունները և բացատրելով չարագործության վնասակար հետևանքները՝ Շնորհալին ձգտում է ցույց տալ այդ ամենից ազատվելու բարոյահրավական

⁴³Նոյն տեղում, էջ 81:

⁴⁴Նոյն տեղում, էջ 82:

ուրիներն ու եղանակները: Նա հասուկ ուշադություն է դարձնում **մարդու բարոյական կառարելագործման խնդրին**՝ կարևորելով նաև օրինականության և իրավակարգի պահպանումը: Որպես հոգևորական՝ Շնորհալին թեև չի սահմանում մարմնական պատիժներ, բայց հիմնավորում է տարարնույթ հանցագործությունների վտանգավորությունը՝ նշելով հոգևոր պատիժներ (ապաշխարանք, պահք, աղոթք):

«Թուղթ ընդհանրականը» արժենորվում է նաև որպես **բաղաքական փաստաթուղթ**, որում արտացոլվել են Կիլիկիայի հայության քաղաքական ակնկալություններն ու ձգումները: Շնորհալու քաղաքական նպատակներն են կարգուկանոնի հաստատումը երկրում, կենտրոնացված իշխանության հզորացումը, իշխանական տների միավորումը՝ թագավորության ստեղծման նպատակով, կրոնադավանական ու քաղաքական հիմնահարցեր քննարկելիս բոլոր ազգերի իրավահավասարության, քրիստոնեական ներդաշնակության հաստատումը:

«Թուղթ ընդհանրականը» ունեցել է **գործնական նշանակություն** և արժենորվում է որպես հայ իրավական մտքի պատմության հիմնարար աղյուրներից մեկը: Այս փաստաթուղթից օգտվել են Սիմիքար Գոշը, Սմբատ Սպարապետը, Շ. Շահամիրյանը, արևմտահայ սահմանադրական գործիչները և այլք: Երկի նշանակությունը կարևորվել է և՝ միջնադարում, և՝ հետագա պատմաշրջաններում: Այն բազմիցս արտազրվել ու տարածվել է հայկական համայնքներում ու ներկայում է արդիական է՝ իր գաղափարակարգով ու հոգևոր-բարոյական արժեհամակարգով:

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում մեկնաբանվում են Ներսես Շնորհալու խրատական կանոնները՝ ուղղված հայ հասարակության բոլոր խավերին՝ հոգևոր առաջնորդներին, քահանաներին, աշխարհիկ իշխաններին, գիննորներին, ժողովրդին: Կանոնների հիմքում ընկած են անձի ինքնիշխանության, կամքի ազատության, իրավունքի և օրենքի գերակայության, արդար դատավարության և այլ գաղափարներ: Մերկացնելով բոլոր դասերի թերությունները, բացատրելով չարագործության վնասակար հետևանքները՝ Շնորհալին ձգում էր ցույց տալ այդ ամենից ազատվելու բարոյակարավական ուղիները: Հանուն ազգի բարօրության նա բոլոր դասերին հորդորում է համագործակցել և բանական օրենքնե-

բով կարգավորել հասարակական հարաբերությունները։ Նա հատուկ ուշադրություն է դարձնում մարդու բարոյական կատարելազործման և ազգի հոգեւոր պայարինման խնդիրներին։ Մտածողը թեև չի սահմանում մարմնական պատիժներ, բայց հիմնավորում է զանազան հանցագործությունների (գողություն, սպանություն, խարդավանք, անձի արժանապատվության ուղնահարում, դավաճանություն, վաշխառություն և այլն) վտանգավորությունը՝ նշելով հոգեւոր պատիժներ։

Բանալի բառեր- խրատական կանոններ, անձի ինքնիշխանություն, կամքի ազատություն, բնական իրավունքներ, մարդու արժանապատվություն, բարոյական կատարելազործում, արդարության սկզբունք, իմաստուն կառավարում, արդար դատաստան, համաշխառության սկզբունք, հոգեւոր պատիժներ։

ПОЛИТИКО-ПРАВОВЫЕ ИДЕИ НЕРСЕСА ШНОРАЛИ В “СОБОРНОМ ПОСЛАНИИ К АРМЯНСКОМУ НАРОДУ”

Лилит Сарвазян
Кандидат философских наук

РЕЗЮМЕ

В статье интерпретируются канонические правила Нерсеса Шнорали, адресованные всем слоям общества: духовным лидерам, священникам, светским дворянам, военным, народу в целом. Раскрывая все недостатки классов, объясняя вредные последствия злодеяний, Шнорали стремился показать морально-правовые пути избавления от всего этого. Он призывал все классы общества сотрудничать и с помощью разумных законов регулировать общественные отношения во имя благополучия нации. Он уделяет особое внимание проблемам нравственного усовершенствования личности и духовного исцеления нации. Мыслитель, хотя и не определяет телесные наказания, но обосновывает опасную сущность различных преступлений (воровство, убийство, интрига, унижение чести и достоинства личности, прелюбодеяние, ростовщичество и т. д.), отмечая духовные наказания.

Ключевые слова: поучительные правила, суверенитет личности, свобода воли, естественные права человека, достоинство, нравственное совершенствование, принцип справедливости, мудрое управление, справедливый суд, принцип соразмерности, духовные наказания.

LEGAL AND POLITICAL IDEOLOGY OF NERSES SHNORHALI'S "ECUMENICAL EPISTLE"

Lilit Sarvazyan
Candidate of Philosophy

SUMMARY

The article interprets Nerses Shnorhali's preceptive Canons addressed to all the strata of the Armenian society including religious leaders, clergymen, secular rulers, soldiers and people in general. The Canons are based on sovereignty of a person, freedom of will, supremacy of right and law, fair trial and other ideas. Uncovering the shortcomings of all the classes of the society and explaining destructive effects of evil deeds, Shnorhali sought to demonstrate ethical and legal ways for getting rid of those flaws. For the sake of the nation's prosperity he urges all social classes to join their efforts and regulate social relations by means of rational laws. He pays special attention to person's moral perfection and to issues of spiritual recovery of the nation. While the great thinker does not prescribe corporal punishment but explains the danger posed by various crimes (robbery, murder, fraud, violation of person's dignity, betrayal, usury, etc.) and prescribes religious punishment for committing them.

Key words: preceptive canons, sovereignty of person, freedom of will, natural rights, dignity of a human being, moral perfection, principle of justice, good governance, fair trial, principle of proportionality, religious punishment